759. ԽԱՉՔԱՐ. մատուռի մեջ, շրջանակներին, կիսաեղծ, 1 տող.

ԼԵՐ ՔԱՒԱՐԱՔՈՄ

ՀԱՅՐԱՊԱՏՈՒՄ

[ՍԲ ՆՇԱՆՍ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՅՈՎԱՆԻՍԻՆ ԼԵՐ ՔԱՒԱՐԱՆ ՔՈ
Մ. . ԹՎԻՆ] . . .

ԻԳԱՀԱՏ ԳՅՈՒՂԱՏԵՂ

Երբեմնի գյուղի ավերակները տարածված են Քոբայրավանքից 1 կմ հյուսիս, Այգեհատից արևելք, լեռնապատի զառիթափ լանջերին ու ծորակի եզերքին: Այն ԺԱ-ԺԳ դդ. եղել է Կյուրիկյանների տիրույթը: Այժմ տարածքը պատված է ցանցառ այգիներով և մացառուտներով: Այստեղ պահպանվում են կոպտաքարե շարվածքով կամ փոսորակների վերածված տների մնացորդները, եկեղեցու, մատուռի ավերակներ՝ շրջապատված ընդարձակ գերեզմանոցով, բազմաթիվ ուշագրավ ու եզակի հորինվածքով տապանաքարերով և խաչքարերով, որոնք անողորմաբար տեղահանվել ու ջարդոտվել են «կուլտուրական հեղափոխության» տարիներին:

Իգահատի ծորի վիմագիր արձանագրություններից հնագույնը 1211 թվից է, վերջինը՝ 1579 թ., որից հետո գյուղը լքվել-ամայացել է, և այլևս նրա մասին ոչ մի հիշատակություն չկա:

Գողգոթավանք. Իգահատ գյուղատեղիում պահպանվող միակ կանգուն եկեղեցին է: Տեղական դյուրահնչեղությամբ կոչվում է Գոգոթավանք, որը մեզ է փոխանցվել բանավոր զրույցներով: Անվանումը կապված է Երուսաղեմի մերձակա Գողգոթա սրբացված լեռան հետ, ուր, ըստ ավանդության, թաղված է նախահայր Ադամը, և ուր խաչվել է Հիսուս Քրիստոսը:

Աղոթասրահն իր որմերի վիմագրերում պարզապես կոչվում է եկեղեցի՝ առանց որևէ անվան, իսկ Քոբայրավանքի Արևշահի արձանագրության մեջ՝ Բդաեթի (Իգահատի) սուրբ Կաթողիկե՝ այն Մարիամաշեն Կաթողիկեի հետ չշփոթելու համար:

Ամենայն հավանականությամբ, Գողգոթավանքի Կաթողիկեն կառուցվել է 1180-ական թվականներին Սամուէլի կողմից: Սակայն, հավանաբար, վերստին միջամտությունների կարիք է զգացվել ավելի ուշ, որին զորավիգ է կանգնել Մարիամ Կյուրիկյանը, սալարկել ու զուգել է այն, և վերաշինված աղոթարանը, ըստ կարգի, վերստին օծվել է 1223 թվին. այսպիսի ենթադրության հիմք է տալիս մուտքի կիսաշրջան ճակատաքարի արձանագրությունը: Հաղբատավանքի մի նվիրագրի վկայությամբ, նույն Մարիամը՝ Կյուրիկե թագավորի դուստրը, 1200 թ. Իգահատ (Յայգհատ) գյուղից մի ճորտ-շինական է ընծայել Ս. Նշան եկեղեցուն: Ըստ երևույթին, նույն դարում եկեղեցին նորոգել են Գայիանեն ու իր եղբայր Սարգիսը:

Գողգոթավանքի Ս. Կաթողիկեն սրբատաշ բազալտով շարված երկթեք լանջերով միանավ սրահ է, որը մեզ է հասել ամբողջական վիճակում, մասնակիորեն խարխլված են ծածկասալերն ու ներսի սալահատակը:

Իգահատի ծորի հուշարձանները հարուստ են վիմագիր արձանագրություններով, որոնցից սոսկ մի քանիսն են հրատարակվել անցյալում, այն էլ աղավաղ ու անստույգ:

760. ԳՈՂԳՈԹԱՎԱՆՔ. Հյուսիսային մուտքի կիսակամար բարավորի շրջանակին, 1 տող.

ՅԻՇԵԱ ՔՍ ԱԾ ԶՍԱՄԻԷԼ ԵՒ ԶԾՆԱՒՂ Ս|ԻՐ ԳԱԼԲՍՏԵ|Ա|Ն ՔՈՒՄ:

761. ԳՈՂԳՈԹԱՎԱՆՔ. Հյուսիսային մուտքի կամարաքարի վրա, 8 տող.



Ի ԹՈՒ|ԻՆ|:ՈՀԲ: (1223),
ԵՍ՝ ՆՐՋԻՍ, ՈՐԴԻԱՑԵ|Ա|Լ Ս ՄԱՄՔԱՆԱ,
ԴՈՒՍՏՐ ՄԵԾԻՆ ՍԱՐՔՍԻ, ԶՄԲ ՍՈԱՇԴԷՆ
ԶՈՒԳԵՑԻ ԵՒ ԶԷԿԵՂԵՑԻՍ ՍԱԼԵՑԻ ԵՒ ԱՒՐՀՆԵ-
ՑԻ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԵՔ՝ ՅԻՇԵՑԷՔ Ի ՏՐ ԶԻՍ ԵՒ ԶԻՄ-
ՈՑՆ: ԵՒ ԶԻՆՉ Ի ՍԻԿԷԼԻՆ ԳՐԱԾ Է՝ ԷԹՈՂԱԾ ԳԵՂԻՍ
ՀԱՐԿ Ի|ՄԱ|ՆՈՑ ԱՂԻՍ ԵՒ ԻՄ ԿԱՏԱՐԻՉՆ ԱՒՐՀՆԱԾ
ԵՂԻՑԻ: ՅԺԸ: (318) ՀԱ|Յ|Ր|ԱՊ|Ե|ՏԱՑՆ| ԵՒ ԽԱՓԱՆԻՉՆ ՅՈՒԴԱՒ ՄԱՍՆԱԿԻՑ Է
ԱՄԷՆԻՒՔ:

Հրատ. «Լուսա», 1900, Ա. 43:

Ծանոթ. Հրատարակված առաջին տողերը չափազանց անհաջող, աղավաղ ու իմաստազուրկ են՝ *ես մնջիս որդի ացեհս . . . մամքնա . . . ոսմրլ . . . ծին:*

Այս և նախորդ արձանագրությունը նույն ճակատաքարի վրա են, սակայն իրարից անկախ են, միմյանց շարունակություն չեն կազմում և գրված են տարբեր ժամանակներում:

Շատ կարևոր այս վկայագրի՝ *զսուրբ առաշդեն զուգեցի եւ զէկեղեցիս սալեցի եւ աւրհնեցի,* ինչպես և՝ *զինչ ի սիկէլին գրած է՝ էթողած գեղիս հարկ իմանոց աղիս եւ իմ* հատվածները հարկ ունեն պարզաբանման: Առաջին պարբերության իմաստն այն է, որ Նրջիսը նախապես, կանխավ (= *առաշդեն*) կահավորել է եկեղեցին, ապահովել սպասքով ու պիտույքներով (=*զուգեցի*), սալարկել հատակը և օրհնել (=*աւրհնեցի*) այն: Հասկանալի է, որ իշխանուհի Նրջիսն իրավասու չէր օրհնել աղոթատունը, դա վերապահված էր թեմի առաջնորդին (կամ վանահորը): Հետևաբար, խոսքը վերաբերում է վերանորոգումից հետո նավակատիքի օծման արարողության ընթացքում ավանդաբար կատարվող հատուցմանն ու նվիրատվություններին, որոնք այս դեպքում հոգացել է Նրջիսը: Հաջորդ կապակցության համաձայն՝ զիջվել է (= *է թողած*) Այգեշատ գյուղից Շահնշահ Զաքարյանի (= *իմանաց աղիս*) և իր՝ Նրջիսի օգտին իշխանության հրամանով սահմանված (= *սիկէլին գրած*) հարկը: Վերջում կա մի կիսատ տող :Ա: ԿԱՐԱՍԱ (թե՞ :Ա: ԿԱՐԳ՝ մեկ աղոթք կամ սաղմոս ասելու պայման), որի իմաստը չի պարզվում:

Նրջիսը ամիրսպասալար Սարգիս Զաքարյանի դուստրն է. Զաքարեի և Իվանեի քույրը, Դսեղի Մամիկոնյանների հարսը, որը, դատելով վիմագրերի հաղորդումներից, հավանաբար, եղբորորդի Շահնշահի խորհրդով ստանձնել է տիրույթների կառավարչի պաշտոնը՝ որոշակի իրավասությունների շրջանակներում: Նա հիշատակված է նաև Գոշավանքի ու Հաղբատավանքի 1234 թ. արձանագրություններում:

Տարակույս է հարուցում և *Նրջիս, որդիացելս* (= որդիացեալս) *Մամքանա* կապակցությունը, ուր խոսքն, անշուշտ, որդեգիր-հոգեացեալ Վասակին չի վերաբերում, և այն նվիրվածության հովանավորչության իմաստն ունի:

Պետք է կարծել, որ *անգաւակ գոլով,* կյանքի վերջում Նրջիսը, հիասթափվելով կյանքից ու անցողիկ աշխարհից, իրեն նվիրել է ճգնության: Նման հետևությունը բխում է Սանահնի վանքի գրատան միջանցքի նրա տապանագրից. *ճգնաւորն պատրոն Նրջիսն է, քոյր պատրոնացն Զաքարէի եւ Իվանէի* (Կ. Դաֆադարյան, Սանահին, արձ. 143բ): Մնում է անբացատրելի, թե պատրոն հորջորջված ճգնավորուհու՝ Նրջիսի աճյունը ինչո՞ւ չի ամփոփվել վանքի գավիթներից մեկում, մյուս արժանավորների շարքում:

Արձանագրությունը սովորաբար ավարտվում է միաբառ ԱՄԷՆ փակագրով, բայց այս դեպքում հարցն այլ կերպ է լուծվել (*ամէնիւք*՝ բոլորով, ամենքով), որն ստուգման կարիք ունի:

762. ԳՈՂԳՈԹԱՎԱՆՔ. Սամվելի եկեղեցու հյուսիսային պատի արևմտյան անկյունում, արտաքուստ, 5 տող.

✠ ԵՍԱԷ ԵՂԱՀՍԵԴ	ԵՍ՝ ԱՐԵՒՇԱՀՍ, ԵԴ-
ԻԶՈՅՍԻՄԻՔՍԼԵՅՈՒՋ	Ի Զ[Յ]ՈՅՍ ԻՄ Ի ՔՍ ԵՒ ԵՅՈՒ Զ-
ԻՄՀՈԳՈՅԲՂԱԵԹԻՆ	ԻՄ ՀՈԳՈՅ [ՊԱՏՐԱՍՏՆ] ԲՂԱԵԹՍ Ի Ն-
ՈՐՈԳՈՒՄՆԷԿԵՂԵՅՈ	ՈՐՈԳՈՒՄՆ ԷԿԵՂԵՅՈ-
ՅՍ Է:ԺԱՄԶՍԲԽԱՀԻՆ	ՅՍ :Ա: (1) ԱՒՐ ԺԱՄ ԶՍԲ ԽԱՀԻՆ [ԱՐՆԵՆ]:

Ծանոթ. ԶՈՅՍ բառը ժողովրդական իմաստով նշանակում է գարդ, բայց այս կապակցության մեջ ԶՅՈՅԱ բառն է՝ տառերը հետ ու առաջ են: Երրորդ տողում անհասկանալի թվացող է ԲՂԱԵԹ բառը: Տառասխալ ենթադրել պետք չէ, քանզի այն գործածված է Արևշահի մյուս արձանագրության մեջ նույնպես, ուր և բացատրության փորձ է արվել:

763. ԳՈՂԳՈԹԱՎԱՆՔ. հյուսիսային պատի արևելյան մասում, 6 տող.

ԵՍԳԱԷՆԷԵԵՂԲԱՐԻՄՍԱՐ	ԵՍ՝ ԳԱԷՆԷ ԵՒ ԵՂԲԱՐ ԻՄ ՍԱՐ-
ԳԻՍ ՏՈՒԱՔ ԶՄԵՐՀՈԳՈՅՊ	ԳԻՍ, ՏՈՒԱՔ ԶՄԵՐ ՀՈԳՈՅ Պ-
ԱՏՐԱՍՏՆԻՆՈՐՈԳՈՒՄԷԿԵ	ԱՏՐԱՍՏՆ Ի ՆՈՐՈԳՈՒՄՆ ԷԿԵ-
ՂԵՅԻՍ ԵՒ:Բ:ԷԱՄ ԷՄՆԶ	ՂԵՅԻՍ ԵՒ :Բ: (2) ԱՒՐ ԺԱՄ ԷՅՈՒՆ Զ-
ԱՏԻԿՆ ԵՒ ԶՃՐԱԳԱԼՈՒՅՆ	ԱՏԻԿՆ ԵՒ ԶՃՐԱԳԱԼՈՒՅՆ:
ՌԼԽԱՓԱԷ ՈՐՇԻՅԱՅ:	ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ՈՐՈՇԻ ՅԱՅ:

Ծանոթ. Եվս մի նորոգման վկայագիր, ուր հարկ է մտածել, որ այն տեղի է ունեցել առնվազն ԺԳ դարի երկրորդ կեսին կամ վերջին: Ուշագրավն այն է, որ նորոգողը կին է, օժտված չէ տոհմիկ տիտղոսներով, սակայն ունեցել է սեփական միջոցները տնօրինելու հնարավորություն և եղբորը մասնակից է դարձրել այդ ձեռնարկմանը: *Պատրաստն* այս դեպքում պետք է հասկանալ ձեռքի տակ ունեցածը հոժարությամբ նպատակամղելուն, որն արժեցել է երկու դահեկան: Կա 7-րդ տող ևս՝ :Ա: (1) ԱՆՄԱՀ, որը մնում է անհասկանալի:

764. ԳՈՂԳՈԹԱՎԱՆՔ. հյուսիսային պատին, նախորդից ներքև, արտաքուստ, 7 տող.

ԵՍԱՎԵՃՍԼԳՈՀԱՆ	ԵՍ՝ ԱՎԵՃՍ, ԵՒ ԳՈՀԱՐՆ,
ՏՎԱՔՋԱԵՐԳՆԱՃԷՊՈՋՐ	ՏՎԱՔ ՁՄԵՐ ԳՆԱՃ ԷԳՈ ՁՐ-
ԻՆԵՐՔԵԻԵԿԵՂԵՑՈՅՍԵՒ	Ի ՆԵՐՔԵԻ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԵՒ
ՄԵՐՆԵՁՄԱՆՑՆՀԱՄԱԵ	ՄԵՐ ԳԵՐԵԶՄԱՆԱՑՆ ՀԱՄԱՐ ԵՒ
ԵՏՈՒՆՄԵՁ:Ա:ԱՅԱՏՄԻՆ	ԵՏՈՒՆ ՄԵՁ :Ա: (1) ԱՒՐ ԺԱՄ Ի ՏԱՐԻՆ
ՅԱՅՏՄՅԵՆՀՐԱՑԱՍ	[Յ]ԱՅՏՆՈՒԹԵ[Ա]Ն ԵՐԱԳԱԼՈՒ
ՑՆԿԱՏՄԻՉՔԱՒՐԿ	ՑՆ: ԿԱՏԱՐԻՉՔ ԱՒՐԿ[ՆԻՆ ՅԱՅ: ԱՄԷՆ]:

Ծանոթ. Խոսքը վերաբերում է եկեղեցու մոտով դեպի Դեբեդ հոսող առվակից ցած, ջրովի այգին գնելուն և եկեղեցուն նվիրելուն: Այգու մնացորդները պահպանվում են և այժմ: Վերջին երկու տողերը կիսաեղծ են և հնարավոր վրիպումից ոչ զերծ: *Ակեծը* կարելի է և *էկեծ* կարդալ, կամ, թերևս, *Ակէտս:* Վերջին տողը կոտրտված ու կիսաեղծ է:

765. ԳՈՂԳՈԹԱՎԱՆՔ. հյուսիսային պատի արևելյան մասում, արտաքուստ, կոպտակուվ քարի վրա, 5 տող.

·:ԵՍԱՆԴՐԱՒՈՒ ԱԱԻՆՔԻԷՄ	ԵՍ՝ ԱՆԴՐԱՒՐԻ, ԱՂԱԽԻՆ ՔԻ, ԷՏ-
ՈՒՁՄՀՊՈՅՊԱՏՐԱՍՏՆՅԷԿ	ՈՒ ՁԻՄ ՀՈԳՈՅ ՊԱՏՐԱՍՏՆ ՅԷԿ-
ԵՂԵՑԻՍԷԷՏՈՒՆ:Ա:ԱՁԱՄՁԵԱ	ԵՂԵՑԻՍ ԵՒ ԷՏՈՒՆ :Ա: (1) ԱՒՐ ԺԱՄ ՁԵԱ-
ՈՒՁԱԴԱՆՈՎԽԱՓԱԷՆՁՈՎ	ՈՒՁԱՐԴԱՐՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ՆՁՈՎ-
ԵԼԵՂԻՑԻՅԱՅ ՆՁ:	Ե[Ա]Լ ԵՂԻՑԻ ՅԱՅ: ԱՄԷՆ:

Ծանոթ. Համարում ենք XIII դարի (Ս. Բ.):

766. ԳՈՂԳՈԹԱՎԱՆՔ. հյուսիսային մուտքի գլխի կամարի հենակին և նրան կից պատին, 5 տող.

ԵՍՎԱՉԷՁԻՄՀՈԳՈՅՊԱ	ԵՍ՝ ՎԱՉԷ, ՁԻՄ ՀՈԳՈՅ ՊԱ-
ՏՐԱՍՏՆՅԷԿԵՂԷՑԻՍԷՄ	ՏՐԱՍՏՆ ՅԷԿԵՂԷՑԻՍ ԷՏ-
ՈՒԷԵՄՈՒՆԻՆՁ ԱԱԻՐ	ՈՒ ԵՒ ԵՏՈՒՆ ԻՆՁ :Ա: (1) ԱՒՐ
ԺԱՄՁՅԱՅՏՆՈՒԹՆ	ԺԱՄ ՁՅԱՅՏՆՈՒԹ[ԵԱ]Ն:
ՈՒԽԱՓԱԷԵՄԽՀՁԻՍՏԷ	ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ԻՄ ԽՂՃԻՍ ՏԷ[Ր Է ԱՈԱՁԻ ԱՅ]:

Ծանոթ. Վերջին երկու բառերը պարտադրող չեն:

767. ԳՈՂԳՈԹԱՎԱՆՔ. մուտքի արևելակողմում, 4 տող.

ՔԱՀԱՆՈՐ	ՔԱՀԱՆԱ, ՈՐ
ՁՎԱՉԷԻՁ	ՁՎԱՉԷԻ Ժ-
ՄԽՓԱԷՆ	ԱՄՆ ԽԱՓԱՆԷ՝ Ն-
ՁՈՎԵԼԵՂԻՑԻ:	ՁՈՎԵ[Ա]Լ ԵՂԻՑԻ:

Ծանոթ. Թվում է, թե վերաբերում է նախորդին (խմբ.):

768. ԽԱՉՔԱՐ. Քոբայրավանքի և Գողգոթավանքի միջև՝ սռի վրա, ճարտարապետորեն ձևավորված պատվանդանի երեք կոթողներից կենտրոնականի քիվին՝ 2, պատվանդանի երեք բարձիկներին՝ 4 տող.

Ի ԹՈՒԻՍ :ՌՃԲ: ԶԳՐԻԳՈՐ, ԾԱՌ-
Ա ՔԻ, ՅԻՇԵՍՋԻՔ Ի ՅԱՂԱՒԹՍ:
ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ, ՍՆՈՒՑԱԾ ԵՒ ՄԵՂՈՒՑԵԱՑԱ ԱՒԱԳԱ ԴՍՏԵՐ ՄԵԾԻՆ ՍԱՐԳՍԻ ՊԱՏՐՈՆ
ՆՐՋՍԻՆ, ՍՆՈՒՆԴ ԹԱԳՈՒՀՈՅՆ ՄԱՄՔԱՆԱ, ԿԱՆԳՆԵՑԻ ԶՍԲ ԵՐԲՈՐԴՈՒԹԻ[ՒՆ]Ս ՈՂՈՐՄՈՒ-
Թ[ԵԱՄ]ԲՆ ՊԱՏՐՈՆԻՆ
ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ, ԵՂԲԱՐՑ ԵՎ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ ԵՒ ՔՈՒԵՐ ԻՄՈՅ ԲԱՆՈՒՇԱՀԻ ԿՐԱՒ-
[ՆԱՒ]ՈՐԻ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ՝ ՄԵ-
ՂԱՑ ԹՈՂՈՒԹԻ[ՒՆ] ԽՆԴՐԵՑԷՔ ՅԱՅ ԻՆՁ ԵՒ ԻՄՈՑՆ ԱՄԵՆՈՅՆ, ԵՒ ԱՅ ՁՁԵՁ ՅԻՇԷ:ԱՄԷՆ:

Հրատ. Ջալալյանց, Ա, 103, ԿՏ, 67:

Ծանոթ. Քիվի երկտողը ցայժմ մնացել է աննկատ, իսկ պատվանդանի կարևոր տարեգրությունը գիտությանը հայտնի է Ս. Ջալալյանցի (թերևս՝ նրա հանձնարարությամբ այն անվարժ ընդօրինակողի) աղավաղված, քմածին միջամտություններով, կիսատ-պռատ, գրեթե իմաստազուրկ հրատարակությամբ, որին մեկառմեկ անդրադառնալու հարկ չկա: Առաջին մեկուկես տողը կարդացել է. ***Ես Գրիգոր սնուցեալ և մեղուցեալ Աստուծոյ Նրջսի թագուհւոյն և Մամքանայ,*** 2-րդ տողի ***պատրոնին՝ Պատրոնիկոյ*** (այն դիտելով անձնանուն), ***Բանուշահը՝ Բարեշահ,*** բաց է թողել 4-րդ տողի վերջին 10 բառերը:

Նկատենք, որ Ջալալյանցի ժամանակ հուշարձանը եղել է անխախտ ու ամբողջական, 1930-ական թթ. այն փորձել են իսպառ ավերել, ցած գլորել երկու խաչքարերը, տեղաշարժել պատվանդանի ծանր քարերը, կոտրտել որոշ տառաշարքեր:[71] Չնայած սրան, արձանագրությունը վերծանվում է հավաստիաբար: Առաջին տողի ԱՒԱԳԱՈՐԱՑ (կամ աւագաւորաց) բառի տառերի ստորին եզրերն են մնում:

Թագավոր չունեցող երկրում թագուհի պատվանունով հանդես եկող Մամքանը առաջին անգամ հանդիպում է Քոբայրավանքի 1186 թ. նվիրագրում՝ որպես Խաչգունին սնուցած (խնամակալ, հովանավոր – Մուրադյան, ՀՎԱ, 170): Այս դեպքում նա կրում է թագուհի տիտղոսը՝ Բագրատունյաց տոհմից սերած լինելու շնորհիվ: Մամքանը 1229 թ. պատարագաժամ է ստացել Սանահնի վանքում Համլիկի հետ՝ ամուսնական կամ ազգակցական որևէ կապ չմատնանշելով: 1239 թ. մի արձանագրության մեջ նա հանդես է գալիս որպես Դսեղի Համազասպյան Մարծպան Մամիկոնյանի եղբայր Սարգսի որդի Համլիկի կին՝ առանց տոհմանվան:

---

[71] Այս և Իգահատի ձորի մի շարք տեղահանված, կոտրտած խաչքարեր խնամքով կարկատել և իրենց նախնական տեղերում վերականգնել է հոգեցավ վարպետ Աղեկը՝ հայրենի մշակութային ժառանգության անվարձահատույց նվիրյալների իր տոկուն ջոկատով, այդ թվում՝ 1291 թ. համբարձման տեսարանով գեղահրաշ կոթողը:

Քրիստոսի ծառա հանձարված Գրիգորը Հառիճավանքի 1234 թ. արձանագրությունում իրեն հանձնարում է *սնուցած մեծին Սարգսի դստերն Նրջիսին*, ուր պատարագ է տրվել նաև քրոջը՝ Բանուշահին (Բանուշահ – ՎՏ, 78):

Սամքանը Կիւրիկե Գ և Թամարի դուստրն է, Մարիամի, Ռուսուքանի, Վանենիի, Աբասի, Բավրինայի քույրը՝ սերած Բագրատունյաց հարստության Տաշիր-Զորագետի թագավորական ընտանիքից, Դավիթ Անհողինի թոռը:

Հիմնական տեքստի առաջին տողի միջնամասում ԱՒԱԳԱ անունից կամ տառախմբից հետո 9-10 տառատեղ հիմնովին եղծված է: Ս. Ասդումյանը խմբագրելիս այս հատվածը սկզբնապես վերծանել է ՄԵՂՈՒՑԵԱՅՍ ԱՒԱԳԱ/ԻՈՐԱՑ ԴԱՏ/ԵՐ, այնուհետ, վերծանությունն ու ծանոթությունը ի նոր շարադրելիս՝ կարդացել է ՄԵՂՈՒՑԵԱՅՍ ԱՒԱԳԱ /ԴԱՏ/ԵՐ: Երկու դեպքում էլ վերականգնված տառաքանակը չի համապատասխանում եղծված տառատեղերին (խմբ.):

769. ԽԱՉՔԱՐ. Նախորդից հարավ, նույն պատվանդանին, քիվին և ստորին պռնկին, 4 տող.



Ի ՈԿԳ (1214) ԹՒ[ԻՆ] ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ ՍԱՐ[ՈՒ]ԽԱ: ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ԵՒ ԶՏԵՐՈՒՆ:

Ծանոթ. Այս յուրատիպ հուշարձանը հայտնի է «Սուրբ Գրիգոր» անվամբ՝ ի պատիվ կանգնեցնողի և, հարկավ, Գրիգոր Լուսավորչի: Հղկած բազալտե եռաստիճան գետնախարիսխների վրա դրված է նույնքան նրբամշակ երկու շարք, իսկ վերջինիս հենված պատվանդաններին կանգնած են խաչքարեր: Հուշարձանի առջև կան 3 սալատապաններ՝ անհիշատակագիր: Ճարտարապետական հորինվածքով նման հուշարձանների խմբում մնում է եզակի երևույթ՝ իբրև նախօրինակ 1241 թ-ին Կողեսում Տուտիկ իշխանի կանգնեցրած հուշակոթողի: Ս. Գրիգորը, ըստ պատվանդանի արձանագրության, կրում է Սուրբ Երրորդություն անունը թե բուն նախապատճառի, և թե խաչքարի թվի պատճառով:

Սույն արձանագրությունը պարզում է, որ հուշարձանախումբը (նաև խաչքարերը) կերտել է Տերունը, առաջինը՝ 1217 թ-ին, Սարուխայի հիշատակին, ապա ամբողջացրել է 1223 թ-ին: Վարպետի խնդիրն ավելի քան պարզ կլիներ, եթե արձանագրությունն ունենար *Ի ՈԿԶ թւին կակնգնեցաւ զխաչս ի բարեխաւսութիւն Սարուխա: Յիշեցէք ի Քրիստոս եւ զՏերուն,* սակայն ակնհայտ է, որ Տերունը ոչնչով չի առնչվում պատվիրատուին կամ ննջեցյալներին, իսկ հատկապես Գուգարքում սովորական էր քարգործ վարպետների անորոշ ներկայացումը՝ չնշելով նրանց կոչումը:

Տերունը հայկական միջնադարյան ճարտարապետ-արվեստագետների ու քարգործ վարպետների շնորհալի դեմքերից է, որից մեզ հասած միակ գործը չէ սա:

770. ԽԱՉՔԱՐ. Գողգոթավանքից հյուսիս, պատվանդանից գլորած, թևերի արանքներում. թիկունքին և պատվանդանին, 2 տող.



ՍԲ Տ[Է]Ր-
ՈՒՆԱԿԱՆ:

Ի ՅԱՆՑԵԼՃԱՄՆԱԿԱՑ
ԵՒ Ի ԿԱՐՃԵԼԱՒՈՒՐՑՍ
ԵՍ ԱՐԵՒՇԱՀԱ ՀԱՆԴԵ
ՐՁ ԱՄՈՒՍՆԱՒԻՄՈՎԿ
ԱՆԳՆԵՑԱՔ ԶՆՇԱՆՍ
ՔԻ ԱՌ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈ
ԳՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ԵՏՎԻ
ԶԻՄ ԴՐԱՄԱՅԳԻՆ ԱՅԳԻ
Ն Ի ՀԵՏ ԻՄ ԱՆՑՄԱՆ Ի Յ
ԱԼՅՍ ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ ՔԱՀԱՆ-
Ա. ՈՐ ԶՊՏՈՒՂՆ ՍՏԱՆԱ
ՊԱՐՏԻ Ի ՏԱՐՈՒՄՆ :Բ: ԺԱՄ:

Հրատ. Զալալյանց, Ա. 102-103, «Լումայ»,1900, Ա. 46. «Լումայ», 1900, Բ. 328. Մելիքսեթ Բեկ. 66. ՎՏ. 35. Մուրադյան, ՀՎԱ, 171 (քաղել է նախորդներից), Շահինյան,ՀՄԿՀ, 58:

772. Նույն խաչքարի պատվանդանին, 3 տող.

✝ ՔԱՀՆԱՅՊՐՁՍԲ ԽԱՉԻՆ
ՆԽԱՓԱՀԱՐԵՒՇԱՀԻՆԵՆՈՇԿՆ
ԱՌԱՋԻՔԻՆՈՑԱՄԵՂԱՑՆՏԷՐԷ:

ՔԱՀԱՆԱՅ, ՈՐ ԶՍԲ ԽԱՉԻՍ [Ժ]-
ԱՄՆ ԽԱՓԱՆԵ ԱՐԵՒՇԱՀԻՆ ԵՒ ԱՆՈՇ-
ԿԱՆՆ՝
ԱՌԱՋԻ ՔԻ ՆՈՑԱՅ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ է:

Ծանոթ. Անցյալում հրատարակվել է միայն թիկունքի արձանագրությունը: Զալալյանցն ունի ՈԼԴ (1185) ԹՎԱԿԱՆ, որն ուրիշները չեն տեսել: Եթե թյուրիմացություն չէ, ապա դա կարևոր է եկեղեցու կառուցման ժամանակի առումով: Ուշագրավ է պատվանդանի վճռագիրը, ուր նշված է նաև այս ծորերում քանիցս հանդես եկող Արևշահի կնոջ *Անոշկայի* անունը: Շատ ավելի կարևոր է խոհափիլիսոփայական նախաբանով նվիրագրի իմաստը, այն է, որ երբ անցել էր ժամանակը (հասակ էին առել) և կարճացել ապրելու օրերը, Արևշահն իր և կնոջ հոգու հիշատակի համար կանգնեցնում է *Նշանս Քրիստոսի* (խաչքարը)՝ անշուշտ մոտերքում գտած (դրամագին) այգին նվիրելով Գողգոթավանքին: Ապա կայացվում է իրավավճիռ, որ իր մահից (= անցմանից) հետո, սուրբ եկեղեցու *քահանան, որ զպտուղն ստանա,* պարտավոր է տարեկան 2 ժամ պատարագ մատուցել նրանց հիշատակին, այլապես ինչպես գրված է պատվանդանին, ժամը խափանողը նրանց մեղքերի կրողը կլինի:

Իգահատի ջրառատ և տաքուկ ծորում փարթամ այգիներ են աճում (խաղող, դեղձ, ընկույզ, այլևայլ մրգեր, հատապտուղներ և այլն), սակայն այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե այգու բերքի, պտուղների ստացմանը, այլ այգու հասույթից, բերքից հոգուտ եկեղեցու գանձվող տուրքին՝ հարկին (պտուղ, պտղի), մասնահանվող եկամտին, որը, սովորաբար, կազմում էր ընդհանուր հասույթի մեկ տասներորդ մասը:

773. ԽԱՉՔԱՐ. ջարդոտված, ընկած է նախորդի մոտ, քիվի մնացորդին, 1 տող.

ՍԲ ՆՇԱՆՍ ՏԼԷ [ՐՈՒՆ[ԱԿԱՆ]...

774. ԽԱՉՔԱՐ. վերևի մասը կորած, Գողգոթավանքի հարավային պատի տակ, կրկնաստիճան պատվանդանի վրա, թիկունքին 8 տող.

ԵՋԼՀՆՆՈՐԱՐՔԵՐԿ	.....
ՅԻՇԵՑԷՔՋԻԱԻՋՀԱՅՐԵԻՋ	.....[ԳԵՐ]ԵՋՄԱՆ ՆՈՐԱ: ՈՐՔ ԵՐԿ[ՐՊԱԳԷՔ]
ԵՂԲԱՍՆՄԵԻՋԱՆԴԱՆԵԿՈՐ	ՅԻՇԵՑԷՔ ՋԻՍ ԵՒ ՋՀԱՅՐ ՍԻՄԵ[ՈՆ Զ]
ԴՆԻՄՋԱՂԹԻԷԼՊԿԻՍԱԷԱՎ	ԵՂԲԱՐՍՆ ԻՄ, ԵՒ ՋԱՆԴՐԱՆԵԿ ՈՐ-
ԱՂՔԱՆԵՑԱԻԵՒԷԹՈՂՍՈՒՔԱՄ	ԴԻՆ ԻՄ՝ ՋՍԱՂԱԹԻԷԼ, ՈՐ ԿԻԱԱԻՐԵԱ Վ-
Ի ԻԹԱԾՆՈՂԱՑԻՐՈՑԵԻ	ԱՂՋԱՆԵՑԱԻ ԵՒ ԷԹՈՂ ՍՈՒՔ ԱՆՄ-
ԱԾՅԻՇՈՂԱՑՏԵՒՅԻՇ	ԽԻԹԱՐ ՃՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ: ԵՒ
ԵԼՈՑՆՈՂՐՄԵՍՑԻԱԷՆ	ԱԾ ՅԻՇՈՂԱՑՏ ԵՒ ՅԻՇ-
	ԵԼՈՑՆ ՈՂՈՐՄԵՍՑԻ: ԱՄԷՆ:

Ծանոթ. Խաչքարի վերին կեսը ջարդել են՝ ոչնչացնելով հիշատակագրության սկզբնատողերը: Վերջին 5 տողերը հրատարակել է Գր. Կարախանյանը «Միջնադարյան կենցաղային քանդակներ» հոդվածում («Գիտություն և տեխնիկա» ամսագիր, 1975, N11, էջ 22-23)՝ անդրադառնալով խաչքարի գավերի ու սկիհների քանդակներին:

Պահպանված երկրորդ տողում ՋՀԱՅՐ բառից հետո կարելի է կարդալ նաև ԻՄ ԵՒ Զ. ինչը, կարծում ենք, ավելի հարիր կլինի բառակապակցությանը, ինչպես վերծանել է Ա. Բարխուդարյանը (խմբ.):

775. ԽԱՉՔԱՐ. Ս. Գրիգորից ներքև, պատվանդանին մոտ կտորը, մյուս մասը տապալված է կողքին, 7 տող.

Ի ՈԿ (1211) ԹՈՒԻՍ, ԵՍ՝ ԼԱՇԵՐՍ, ՇԻՆԵ-
ՑԻ ԶՄԱՏՈՒՈՆՍ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ Զ-
ԽԱՉՍ ՄԵՐ ՊԱՏՐՈՆԻՆ ՅԵՐԿԱՐ
ԿԵՆԱՒՔ, ՅԻՇԱՏԱԿ ԾՆՈՂ-
ԱՑ ԻՄՈՑ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԵՔ
ՍՐԲՈ ՆՇԱՆԻՆ ՅԻՇԵՍՋԻՔ Ի ՔՍ:

776. ԽԱՉՔԱՐ. Գողգոթավանքից փոքր-ինչ հարավ-արևմուտք, պատվանդանին.

ԿԱՄԱԻՆ ԱՄԵՆԱՅԿԱԼԻՆ ԱՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆՍ ՊԱՐՈՆ ԳՈՐԳԷ, ԵՍ՝ ՎԱՐԴԸՆ
ՊՐԱ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՍԱՆԴՈՒՏ ԿԱՆԿՆԵՑԱՔ ԽԱՉԵՐՍ ԲԱՐԵԽԱՒՍ ՄԵ-
Զ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ՝ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ:
[Ի] ԹՎԻ[Ն] ՉԽԴ (1295):

Ծանոթ. Գեղաքանդակ երկու խաչքարերից ձախակողմյանը տապալված է ծորալանջին, առաջինի պատվանդանը ևս կործանված է, մյուսը արձանագրության սկզբնամասով ընկած է տեղը, գրերը պարզ են, հավասարաչափ և գեղեցիկ:

777. ԽԱՉՔԱՐ. Գողգոթավանքից քիչ հեռու, այգիների մեջ, պատվանդանին, 4 տող.

ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՒ ՊԱՐՈՆ ԳԷՈՐԳԷ ՈՂՈՐՄՈՒԹԵ[Ա]Մ[Բ] ԵՍ՝ ՍԱ-
ՔԵԼՍ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ, ԿԱՆԿՆԵՑԱՔ ԶՄԲ Ա[Ս]ՏՈՒԱ[Ծ]ԱԾԻՆՍ
ԲԱՐԵԽԱՒՍ ԱՌ ՔՍ: ՄԵԾԱՈՐ ԻՄ . . .
Ի ԳԱԼՍՏԵԱՆ ՔՈՒՄ: ԱՄԷՆ: Ի ԹՎ[Ի]Ն ՀԱ[ՅՈՑ Չ]ԽԱ (1292):

Ծանոթ. Վերջին երեք տողերը խիստ եղծված-քայքայված են և վերծանվում են կասկածանքով, իսկ թիվն ավելի քան հավաստի է: Պարոն Գեորգը, եթե այստեղի և Ծաթերի արձանագրություններում հանդես եկող Գորգեն է, Դսեղի Մամիկոնյանների գործակատարն է, բարձրաստիճան մի իշխանավոր՝ օժտված վճիռներ կայացնելու իրավունքով: Խաչի թևերի տակ մարդու և թռչնի հարթաքանդակներ կան:

ԽԱՉՔԱՐ. Գողգոթալանքից քիչ հյուսիս-արևելք, երրեմնի Իգահատ բնակավայրի ավերակների եզրին.

778. Քիվին, 1 տող.

ՀԱՄԲԱՐՁԱԱՇ·ԱՐ ՀԱՍԲԱՐՁԱՎ ԱՇ ԱՐ[ԱՐԻՑ]

ԵՍ ԵՄ ԼՈՅՍՆ ԱՇ...

ԱՌ-ՔՍ ՉՏԼԻՆ ԽՆԴ ?

779. Հիսուսի բարձրաքանդակի երկու կողմում, Տիրոջ ձախ ձեռքի ծայրերին, ժապավենաձև.

ԵՍ ԵՄ Լ.ՈՅՍՆ ԱՇ[ԽԱՐՀԻ]:

780. Խորանի խաչվող եզրակամարին.

ՊԱՐՈՆ ԳՈՐԳԷ ՈՂՈՐՄՈՒԹԵ[ԱՄԲ] ՍՈՒՐԲ
ԽԱՉՍ ԿԱՆԳՆԵ-
ՑԱՒ ԲԱՐԵԽԱՒՍ ԱՌ ՔՍ ՉՏԼԻՆ, Խ-
ԱԹՈՒՆԻՆ,
ԽՆԴՈՒՆԻՆ
ԵՒ ԾՆՈՂԱՑ ՆՈՅԱ: ԱՄԷՆ:

Խաչակոթունի տակ, Գողգոթայի խորհրդապատկերի վրա.

[Թ]Ի[ԼԻՆ] Հ[ԱՅՈՑ] ՉԽ (1291):

Ծանոթ. Խաչքարն արվեստի նշանակալից ստեղծագործություն է: Առանձնապես հորինվածքով ու արձանագրությունների դասավորությամբ հիշեցնում է Աշտարակի Ծակ խաչը, Դսեղի Սիրուն խաչը, Աստվածընկալի Ամենափրկիչը, Առաքելոցի, Դեղձուտի խաչքարերը: Իսկ Համբարձման սքանչելի տեսարանը տաղանդավոր արվեստագետի ձեռքի գործ է և, որ կարևոր է, իրողությունը ներկայացված է թե՛ պատկերաքանդակով և թե՛ հուշող վկայագրությամբ:

781. ԽԱՉՔԱՐ. Գողգոթավանքի եկեղեցուց 150 մ հարավ, քիվին, 2 տող.

ԹՎ ՉԿ ՄԻ ԱԾՊԼՐ
ՄԻ ԽՈՅԱՅԴԵՂԻՆ

[Ի] ԹՎ[ԻՆ]:ՉԿ: (1511): ՏՐ ԱՇ ՈՂՈՐ-
ՄԻ ԽՈՅԱՅԴԵՂԻՆ:

782. ԽԱՉՔԱՐ. Նախորդից 4 մ հարավ, փոքր պատվանդանին, 1 տող.

ԹՎ[ԻՆ] ՉԿԹ (1580):

783. ԽԱՉՔԱՐ. գտնվում է Գողգոթավանքի եկեղեցուց հարավ: Արձանագրությունը փորագրված է խաչապատկերի թևերի արանքում, քիվը ջարդված է, 2 տող.

ՍԲ Տ[Է]Ր-
ՈՒՆԱԿԱՆ:

Ծանոթ. Այս կապակցությունը հաճախ է հանդիպում հատկապես Գուգարքի խաչքարերի վրա:

784. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ. եկեղեցուց 10 մ հարավ, 1 տող.

ՍԲ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԲԱՐԵԽԱԻՍ. . .

785. ԽԱՉՔԱՐ. խորանի վերին գոտուն և մակերեսին, 4 տող.



Պ[Ա]Ր[ՈՆ] ԴԱԻԻԹ:
Թվ[ին]
ՋԿ
Ա (1512):

786. ԽԱՉՔԱՐ. Գողգոթավանքից քիչ հարավ, խաչաթևերի վրա, 1 տող.

Թվ[ին] ՋԿԲ (1513):

787. ԽԱՉՔԱՐ. Գողգոթավանքի գերեզմանոցում, 3 տող.

Թ[վին] ՋԻԱ (1472):
ՏՐ ԱՇ ՈՂՈՐ
ՄԻ ԽՈՑԱԴԵՂԻՆ:

788. ԽԱՉՔԱՐ. Գողգոթավանքի մոտ, ցաքուտում, քիվի տակ, 2 տող.

[Ի] Թվ[ին] ՌԻԸ (1579):

789. ԱԱԼԱՏԱՊԱՆ. նախորդի մոտ, մարդու կիսանդրու վրա, 3 տող.

ՏՐ ԱՇ Ող[ՈՐՄ]Ի
ՆՈՒԿԲԱՐ-
ԻՆ: Թվ[ին] ՋՇԲ (1503):

790. ԽԱՉՔԱՐ. վերին կտորը ընկած այգում, խորանի կողերին, 2 տող.



[Կ]ԱՆԳՆԵՑԱԻ ԽԱՉ[Ս ԲԱՐԵ]-
ԽՕՍ ԽՈՑԻԿԻՆ ԵՒ ԿԵՆԱԿՑ[Ի]Ն՝ ՆԱՍՏԻՆ:

791. ԽԱՉՔԱՐ. Երկաթված, Գողգոթավանքից հյուսիս, ավերակների մեջ, նիստերին.



ԵՍ՝ ՏՐ ԱՎԱԳ. . .
ԹՎԻՆ | ՋՅ (1521):

Ծանոթ. Դատելով լուսանկարից և դրա հիման վրա արված գրչագրից՝ միակ բառը, որ ինչ-որ չափով կարդացվում է ԿԱՆԿԵՑ[Ի]-ն է (վերծանության մեջ ԱՎԱԳ-ի տեղում) և ՋՅ թվականը (խմբ.):

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԱՐԴ ՉԿԱ

792. ԽԱՉՔԱՐ. Աստվածածնի և առաքյալների պատկերներով.

Առաջնորդն . . բարեխաւս լեր Պռոշին . . . ողորմութեամբ պարոն Գուրգէնայ կանգնեցաք սուրբ խաչս . . .

Հրատ. «Լումա», 1900, Ա, 42, «Ազգ. հանդ.», VII-VIII, 422:

Ծանոթ. Ըստ Աղանյանցի, խաչքարը բերվել է Դսեղի Ս. Գրիգորից (ինչն անհավանական է), որի գրերը ոչնչացվել են թնդանոթի գնդակներից: Նրա վերծանությունն է.

Առաջնորդն փայլե . . . լքունք մէ. . .
խաւս լեր Պռոշին բախտա .ո. ունեն
ւառկանն . . . ղ . . . ասլա . . . ողորմութեամբ
պարոն Գուրգենոյ կանգնեցաք սուրբ:

ՔՈԲԵՐ (ՔՈԲԱՅՐ)

Թումանյան քաղաքի հյուսիսարևելյան թաղամասում, Դեբեդի ձախակողմյան լեռնաշղթայի ցածրադիր լանջին, երկաթգծից վերև, արևմտյան փեշին տեղավորված է Քոբայրավանքը:

Այն ԺԲ-ԺԳ դարերում, մասամբ նաև հետագայում Գուգարքի նշանավոր վանքերից ու հոգևոր-մշակութային կենտրոններից էր:

Համալիրը բաղկացած է ավելի քան 15 հուշարձաններից:

Վանքը կազմակերպվել է իբրև միաբնակ հայերի կենտրոն: Հունադավանությունն այստեղ ամրապնդվել է ԺԳ դարում: Սակայն քրիստոնյա երկու թևերի՝ միաբնակների ու երկաբնակ-քաղկեդոնիկների վճռական տարանջատում կամ հարաբերությունների արգելում, թվում է, չի եղել: Նրանք չեն խզել փոխադարձ հարաբերությունները, մինչև իսկ խաչքարեր են կանգնեցվել ԺԳ և հետագա դարերում, իսկ ԺԸ դարում Քոբերում եկե-